ԿԱՐԾԻՔ

Հայկ Մամիկոնի Սողոմոնյանի «Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները 1940-50-ական թվականներին» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Իրանաբրիտանական հարաբերությունները 1940-50-ական թվականներին ձևավորվել են ոչ միայն երկկողմ օրակարգի շրջանակում, այլև համաշխարհային պատմության խորապատկերում և արտացոլում էին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային հարաբերությունների համակարգում ընթացող խորքային աշխարհաքաղաքական վերադասավորումները: Հետազոտական թեման հնարավորություն է ընձեռում իրականացնելու Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական հիմնական դերակատարների միջև ընթացող մրցակցային դինամիկայի համապարփակ վերլուծություն՝ միջազգային հարաբերությունների համակարգի կերպափոխումների և ուժային նոր բևեռների ձևավորման համատեքստում: Դիտարկվող ժամանակահատվածում Իրանը տարածաշրջանային ռազմավարական առանցքային հանգույց էր, որի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կշիռը մեծապես կանխորոշեց ուժերի հավասարակշռությունը Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Մերձավոր Արևելքում: Երկրի ներքին և արտաքին քաղաքական օրակարգերը ձևավորվում էին էներգետիկ ռեսուրսների, աշխարհառազմավարական շահերի և գաղափարական խոսույթների բարդ փոխազդեցության համատեքստում: Դեռևս XIX դարից սկսած՝ Իրանը Մեծ Բրիտանիայի և Ռուսական կայսրության շահերի բախման հիմնական թատերաբեմն էր, ինչն առավել սրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ երկրի տարածքի բրիտանա-խորհրդային ռազմակալմամբ: Հետպատերազմյան շրջանում 1951 թ. նավթի ազգայնացման շուրջ ծավալված ճգնաժամը և 1953 թ. իրականացված պետական հեղաշրջումը («Այաքս» գործողություն) դարձան շրջադարձային կետեր, որոնք Իրանի քաղաքական վերնախավի և հասարակության շրջանում ձևավորեցին խորքային և երկարաժամկետ անվստահություն արտաքին ուժերի նկատմամբ՝ էականորեն կանխորոշելով երկրի հետագա ներքին և

արտաքին քաղաքականության ուղենիշները: Պատմական փորձառությունն Իրանի քաղաքական մշակույթում ոչ միայն նպաստեց արտաքին ուժերի հանդեպ կասկածամտության ինստիտուցիոնալացմանը, այլև ժամանակակից Իրան-Արևմուտք հարաբերություններում կառուցողական երկխոսության լրջագույն խոչընդոտ:

Իրանի շուրջ ձևավորված արդի միջազգային իրադրությունը, որն ուղեկցվում է տարածաշրջանային հակասությունների սրմամբ, պատժամիջոցային ճնշմամբ և արտաքին դերակատարների ներգրավվածությամբ, ըստ էության վերարտադրում է XX դարի կեսերի աշխարհաքաղաքական մրցակցության օրինաչափությունը: Այս համատեքստում հետազոտությունը ձեռք է բերում ոչ միայն կարևոր պատմագիտական արժեք, այլև ընդգծված կիրառական նշանակություն՝ հնարավորություն ընձեռելով վերհանելու ժամանակակից քաղաքական գործընթացների խորքային պատճառահետևանքային հիմքերը:

Հարկ է նկատել, որ դիտարկվող հիմնախնդիրն արժանացել է հայկական և արտասահմանյան պատմագրության լայն ուշադրությանը: Ակադեմիական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ մենագրություններ, հիմնարար հետազոտություններ և արխիվային վավերագրերի ժողովածուներ, որոնք համակողմանիորեն լուսաբանում են Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման գործընթացը, Մերձավոր Արևելքում Մեծ Բրիտանիայի ռազմավարական առաջնահերթությունները, ինչպես նաև 1950-ական թվականների սկզբին իրանական ճգնաժամում արտաքին դերակատարների ներգրավվածության աստիճանն ու ձևաչափերը: Միևնույն ժամանակ, վերջին տասնամյակում առանձնակի գիտական արժեք են ստացել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից գաղտնազերծված արխիվային փաստաթղթերը, որոնք առաջին անգամ պաշտոնական մակարդակով հավաստեցին 1953 թ. «Այաքս» գործողության իրական մասշտաբներն ու իրականացման մեխանիզմները: Սա հնարավորություն է ընձեռում իրականացնելու Իրանում բրիտանական քաղաքականության բնույթի և դրա աշխարհաքաղաքական հետևանքների համապարփակ վերարժևորում:

Հայկ Սողոմոնյանի ատենախոսությունը փորձ է ուսումնասիրելու, մեկնաբանելու և ամփոփ ներկայացնելու 1940–1950-ական թվականներին Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունների դինամիկան՝ կենտրոնանալով քաղաքական, տնտեսական և արտաքին ազդեցությունների համակցված գործոնների վրա, որոնք շարունակաբար ազդել են միջազգային քաղաքական գործընթացների վրա՝ պահպանելով գիտական արդիականությունը, առաջ բերելով թեմայի տեսական վերաիմաստավորման

անհրաժեշտությունը: Աշխատանքի կարևոր առավելություններից է աղբյուրագիտական հարուստ և բազմալեզու բազան: Հեղինակը ներգրավել է տարբեր բնույթի սկզբնաղբյուրներ՝ արխիվային փաստաթղթեր, դիվանագիտական նյութեր, հուշագրություններ, մամուլի հրապարակումներ, ինչպես նաև մասնագիտական գրականություն ռուսերեն, անգլերեն և պարսկերեն լեզուներով: Հատկապես արժեքավոր է պարսկերեն աղբյուրների կիրառումը, որը թույլ է տալիս խնդիրը դիտարկել ոչ միայն արտաքին, այլև իրանական ներքին ընկալումների և մոտեցումների համատեքստում: Նշված հանգամանքները վկայում են, որ հեղինակը տիրապետում է թեմային առնչվող աղբյուրագիտական դաշտին և ունի անհրաժեշտ հիմք հետազոտվող խնդրի բազմակողմ ուսումնասիրության համար:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության մեթոդաբանական և հայեցակարգային տրամաբանությամբ, իսկ ժամանակագրական պարբերացումը հիմնականում համապատասխանում է առաջադրված նպատակի և խնդիրների իրականացմանը: Առաջաբանը հիմնավորում է թեմայի արդիականությունը, ձևակերպում նպատակն ու հետազոտական խնդիրները, ինչպես նաև մատնանշում մեթոդաբանական հիմքը և օգտագործված գրականության տեսական շրջանակը: Առաջին գլուխը ներածական բնույթի է և ներկայացնում է Իրանի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունները երկրորդ աշխարհամարտի տարիներին (1941–1945 թթ.), երկրորդ գլուխը՝ հետպատերազմյան փուլում (1945–1949 թթ.) և երրորդը՝ նավթարդյունաբերության ազգայնացման ճգնաժամի (1949–1954 թթ.) շրջանում: Ատենախոսության յուրաքանչյուր գլուխ կառուցված է թեմատիկ միասնականության սկզբունքով՝ ներառելով քաղաքական, տնտեսական և արտաքին հարաբերությունների վերլուծական ենթաբաժիններ, ինչը հնարավորություն է ընձեռում ձևավորել հիմնախնդրի վերաբերյալ համակարգված և համապարփակ գիտական պատկերացում: Եզրակացության բաժնում ամփոփված են հետազոտության առանցքային արդյունքներն ու հիմնահարցի վերաբերյալ հեղինակի եզրահանգումները, իսկ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկն արտացոլում է աշխատանքի հարուստ աղբյուրագիտական հենքը:

Աշխատանքի կառուցվածքի այս տրամաբանության շրջանակում սակայն անհրաժեշտ է ներկայացնել մի շարք դիտարկումներ, որոնք կնպաստեն ատենախոսության հետազոտական արդյունքների ավելի ամբողջական և հիմնավոր ներկայացմանը:

Առաջաբանում ատենախոսն անդրադառնալով աշխատանքի մեթոդաբանական հիմքին՝ նշում է, որ հետազոտությունը իրականացվել է ռեալիզմի, նեոռեալիզմի, կոնստրուկտիվիզմի և նեոգաղութատիրական տեսությունների շրջանակում: Հարկ է նշել, որ այս պնդումը հիմնականում ներկայացված է դեկլարատիվ մակարդակում. տեսական մոտեցումները հիշատակվում են միայն առաջաբանում, առանց դրանց բովանդակային մեկնաբանության, առանց համապատասխան հեղինակների մոտեցումների վերլուծության և առանց հստակ կապի՝ աշխատանքի հիմնական գլուխների հետ: Մեթոդաբանական գործիքակազմի սակավությունը խոչընդոտում է ընտրված տեսական հայեցակարգերի և վերլուծական մեթոդների գործնական կիրառելիության գնահատմանը: Արդյունքում պարզ չէ՝ ի՞նչ հարցեր են ուսումնասիրվել ռեալիստական կամ նեոռեալիստական տրամաբանությամբ, ինչպե՞ս է կոնստրուկտիվիզմի տեսությունը նպաստել գաղափարների, ինքնության կամ դիսկուրսների մեկնաբանությանը, և ի՞նչ չափով է նեոգաղութատիրական տեսությունը ծառայել որպես վերլուծական գործիք, այլ ոչ որպես ընդհանրական բնութագրում: Հարկ է նաև նկատել, որ աշխատանքում բացակայում է տեսական գրականության համակարգված վերլուծությունը, ինչը խոչընդոտում է ընտրված հայեցակարգային և մեթոդաբանական գործիքակազմի արդյունավետության գնահատմանը: Սա բարդացնում է այն տրամաբանական կապի բացահայտումը, թե որքանո՞վ են նշված տեսական հիմնադրույթներն ուղղորդել հետազոտության վերլուծական ընթացքը:

Հեղինակի կողմից առաջադրված տեսությունների կիրառման ամփոփ վերլուծությունը բացակայում է նաև Եզրակացություն բաժնում. դրա փոխարեն ատենախոսն առաջարկում է դիտարկել Իմմանուել Վալերսթեյնի պերիֆերիաների տեսական շրջանակում, նշելով, որ «1940-1950-ական թթ. Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունների դինամիկան միջազգային քաղաքական համակարգում միջազգային քաղաքական համակարգում պերիֆերիական պետությունների ինքնիշխանության, ռեսուրսների վերահսկման և արտաքին ուժային ճնշումների փոխազդեցությունների բնութագրման օրինակներից մեկն է, որն անմիջական կապ ունի հետգաղութային միջազգային հարաբերությունների տրամաբանության հետ»:

Ըստ այդմ, առավել արժեքավոր կլիներ ներկայացնել ընտրված տեսությունների համառոտ, բայց հստակ տեսական շրջանակ՝ հղում անելով առանցքային հեղինակներին, ցույց տալ, թե տվյալ տեսություններից յուրաքանչյուրն ինչ վերլուծական գործառույթ է կատարում

աշխատանքի մեջ՝ ապահովելով տեսության և էմպիրիկ նյութի միջև մեթոդաբանական հետևողական կապ:

1. Աշխատանքի զգալի հատվածներում հեղինակի շարադրանքը կրում է առավելապես նկարագրական-պատմողական բնույթ: Վերլուծական բաղադրիչը, ինչպես նաև լիարժեք չէ տարբեր պատմագիտական հայեցակարգերի ու տեսակետների համադրման կամ հակադրման քննությունը, ինչը որոշակիորեն սահմանափակում է հետազոտության քննական խորությունը: Էջ 21-ում հեղինակը նշում է, որ «... մեր ժամանակներում հասանելի դարձած արխիվային նոր նյութերի և ժամանակակիցների աշխատությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս վերանայել տարածված կարծիքները», սակայն տվյալ ձևակերպումից հետո ակնկալվում է հենց այդ նոր արխիվային նյութերի բովանդակային ներկայացումն ու դրանց վերլուծությունը, մինչդեռ հաջորդիվ հիմնականում օգտագործվում են արդեն հայտնի և լայնորեն շրջանառված աղբյուրներ և դասական աշխատություններ (Ս. Լ. Ագան, Լ. Վուդվարդ, Վ. Չերչիլ, Ս. Ն. Ֆաթեմի, Գ. Լենցովսկի և այլն), ինչպես նաև ժամանակի պաշտոնական հրապարակումներ: Թեև նշված գրականությունն ինքնին արժեքավոր է, աշխատանքում հստակ չի երևում, թե տվյալ աղբյուրներից որն է «նոր արխիվային նյութ», և հատկապես՝ ինչ նոր փաստական կամ մեկնաբանական բացահայտում է այն ապահովում տվյալ խնդրի ուսումնասիրության համար: Այս առումով ցանկալի կլիներ, որ հեղինակը հստակ առանձնացներ նոր ներգրավված արխիվային նյութերը արդեն հայտնի գրականությունից, գիտական նորույթի տեսանկյունից ներկայացներ դրանց ներդրումը թեմայի ուսումնասիրման մեջ՝ ցույց տալով թե ինչպես են այդ նյութերը նպաստում նախկինում ձևավորված մոտեցումների վերանայմանը կամ ճշգրտմանը: Նման հստակեցումը կուժեղացներ աշխատանքի վերլուծական բաղադրիչը և ավելի տեսանելի կդարձներ հեղինակի ինքնուրույն գիտական ներդրումը:

2. Աշխատանքի որոշ հատվածներում ատենախոսի վերլուծությունները մնում են մակերեսային, մինչդեռ պահանջվում է ավելի խորը, ակադեմիական ձևակերպումներ և վերլուծական գնահատում, որը հնարավորություն կտար ստանալ լիարժեք և հիմնավորված պատկերացում: Օրինակ՝ առաջին գլխում գերտերությունների շահերի բախման ազդեցությունը ներկայացվում է ընդհանուր և նկարագրական հետևյալ եզրահանգմամբ՝ «Պարզ էր նաև այն, որ Իրանում այդ երեք երկրների ի հայտ եկած շահերի բախումը և հակասություններն ինչ որ տեղ Իրանի կառավարության համար հավասարակշռող դեր

խաղաց այդ շրջանում, ինչը կարելի է միանշանակ դրական գնահատել»: Այս տեսակետը համընկնում է գիտական գրականությունում լայնորեն ընդունված մոտեցումների հետ: Թեև հեղինակի այս հատվածի շարադրանքը համապարփակ, հասանելի պատկերացում է տալիս ժամանակաշրջանի հիմնական քաղաքական հակասությունների մասին, սակայն ցանկալի կլիներ, որ այն արտացոլեր առավել ամփոփ և խորքային գնահատական:

3. Աշխատանքի որոշ հատվածներում նյութի շարադրանքը որոշակիորեն շեղվում է ենթագլխի վերնագրում սահմանված և ձևակերպված հիմնախնդրի տրամաբանությունից: Այս պարագայում թեև ներկայացվում է կարևոր փաստական և համատեքստային տեղեկատվություն, սակայն որոշ չափով նվազում է վերլուծության կենտրոնացումն ու խորությունը՝ սահմանափակելով սահմանված հիմնախնդրի ամբողջական, ինտեգրված ուսումնասիրությունը: Օրինակ՝ *2.1. «Իրանական հարցը» ՄԱԿ-ի օրակարգում. Իրանի դիվանագիտական պայքարի բախումը բրիտանական շահերի հետ» ենթագլխում* ատենախոսը հիմնականում կենտրոնանում է 1945–1946 թթ. Ատրպատականի (Ադրբեջանի ժողովրդական հանրապետություն) և Մեհաբադի հանրապետության հետ կապված հետպատերազմյան իրավիճակի, ինչպես նաև խորհրդահիրանական նավթային հակամարտության նկարագրության վրա, մինչդեռ վերնագիրը ենթադրում է ավելի մեծ կենտրոնացում Իրանի դիվանագիտական նախաձեռնությունների և Մեծ Բրիտանիայի հետ շահերի բախման համապարփակ վերլուծություն:

4. Համանման մոտեցում է նկատվում նաև *3.1 «Նավթարդյունաբերության ազգայնացումն Իրանում. ազգայնականության վերելքը և բրիտանական հակազդեցությունը (1949–1953 թթ.)»* ենթագլխի եզրակցության հատվածում, հեղինակը հետևյալ միտք է արտահայտնում. «Մոսադեղը հույս էր տածում, որ նավթի ազգայնացումից հետո էլ կշարունակի ստանալ այն աջակցությունը, որը դեռ նավթի ազգայնացման շարժման սկզբնական շրջանում ստանում էր ԱՄՆ-ից, սակայն քաղաքական որոշակի հեռատեսության պակասը թույլ չտվեց նկատելու աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների ընթացքը և կարելի է ասել սխալվեց»: Թեև այս դիտարկումը որոշակի անդրադառնում է առանձին գործոնների, մեր կարծիքով այն սահմանափակ է և չի արտացոլում Իրանի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակը, մերձավորարևելյան նավթաարդյունաբերության, ինչպես նաև բրիտանաամերիկյան ռազմավարական մոտեցումների համակցված և խորքային վերլուծություն, որում ավելի արդյունավետորեն կարող էին ներգրավվել գաղտնազերծված

փաստաթղթերի նյութերը՝ ստեղծելով փաստագրորեն հագեցած և հիմնավորված պատկերացում՝ ենթագլխում առաջադրված խնդիրների մասին: Թեև հաջորդ ենթագլխում հեղինակը ավելի մանրամասն անդրադառնում է Իրանում ազգայնականության վերելքի և կոմունիստական սպառնալիքի խնդիրներին, այդ բովանդակությունը ավելի տեղին կլիներ քննարկել պամապատասխան ենթաբաժնում՝ ապահովելով վերնագրի հետ բովանդակային համապատասխանությունը և համաչափ վերլուծությունը:

3.2 1953 թ. ռազմական հեղաշրջումն Իրանում. Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի դերակատարությունը» վերտառությամբ ենթագլուխը հիմնականում սահմանափակվում է Իրանի ներքաղաքական իրավիճակի նկարագրությամբ և Մոսադեղի կառավարության անկման պատճառների գնահատմամբ՝ հիմնվելով հետազոտական գրականության լայնորեն քննարկված մոտեցումների վրա: Մասնավորապես, առանձնացնենք հեղինակի հետևյալ ամփոփումը. «Այսպիսով, ընդհանուր փաստերի համադրման արդյունքում կարելի է ենթադրել, որ Մոսադեղի կառավարության անկման պատճառը ոչ միայն նավթի գործոնն էր, այլև ի սկզբանե նրա որդեգրած քաղաքականությունը, թե՛ արտաքին, թե՛ ներքին ոլորտում: Իր կառավարման տապալման պատճառ դարձավ այն, որ նա ամեն կերպ ջանաց քաղաքականությունից դուրս թողնել շահին և բանակին, սակայն բանակը, ինչպես ամեն տեղ, այնպես էլ Իրանում, խոշոր դերակատարում ուներ: Այսինքն, բանակում ծառայողների թվաքանակի և աշխատավարձի կրճատումը, պառլամենտի ցրումը մոսադեղի դեմ դժգոհություն սերմանող պատճառներից էին: Նրա սխալներից էր նաև հոգևորականության հետ առճակատման մտնելը: Եվ ամենայնի արդյունքում դա բերի նրա անկմանը»: Մինչդեռ՝ ենթագլխի ամփոփումը ենթադրում է բովանդակային ավելի խորքային վերլուծություն հեղաշրջմանը Մեծ Բրիտանիայի ներգրավվածության մասով՝ վերնագրում առաջադրված խնդրին համապատասխան:

5. Աշխատանքում հանդիպում են աղբյուրներին տրված ոչ ճշգրիտ հղումներ: Օրինակ՝ «Միասնության բացակայության պատճառով ցեղերի շրջանում ապստամբությունը սկսեց մարել. Բախթիարներից հետո հանձնվեցին նաև դաշղայիները» (հղում 221, էջ 77) հղման աղբյուրը վերաբերում է Գևորգ Վարդանյանի հարցազրույցին zavtra.ru կայքում հրապարակված («Тегеран-43: “Мы были не такие!..”» http://www.zavtra.ru/content/view/2007-10-3122/ , մուտք՝ 18. 11. 2019) հոդվածում և որում չի քննարկվում Իրանի հարավի ցեղերի ապստամբությունների հարցը:

6. Աշխատանքում տեղ են գտել մի շարք լեզվաոճական բացթողումներ, վրիպակներ, խմբագրական և տեխնիկական սխալներ: Հեղինակի կողմից հաճախակի կիրառվում է «հանդիսանալ» բայով կազմված ստորոգյալի կառույցները (օր.՝ «Այդ ժամանակ Մոհամմերայի տիրակալը հանդիսանում էր արաբական ցեղերի կոնֆեդերացիայի նախագահ շեյխ Խազալը», «Նշենք, որ 1909 թ. ստեղծվել էր «Բախթիար օյլ» ընկերությունը, որը հանդիսանում էր այն ժամանկվա ԱՊՆԸ մասնաճյուղը և որի բաժնետոմսերի 3% հանձնվել էր այդ ցեղերի ղեկավարներին» և այլն), որը հայերենում համարվում է ռուսերենի կաղապարային թարգմանության ազդեցություն և գրական գիտական լեզվին անհամապատասխան կառուցվածք: Ցանկալի է նման դեպքերում նախընտրությունը տալ «լինել» օժանդակ բայով կազմված ստորոգյալի կառույցը: Աչքի են ընկնում նաև օտարաբանությունները, օրինակ՝ «ռեակցիոն ուժեր», «կոնցենսիա», «կաբինետ», «պրոֆմիություններ», «բացասական ռեակցիա», «պերիֆերիական» և այլն:

Այդուհանդերձ, նշված դիտողությունները չեն նվազեցնում Հայկ Սողոմոնյանի հետազոտության ընդհանուր գիտական արժեքը և հեղինակի ներդրումը թեմայի բազմաշերտ ու համապարփակ ուսումնասիրության գործում: Հայկ Սողոմոնյանն արժանի է հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի

ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ

Նազելի Նավասարդյան

13.02. 2026